ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՅԱՏԿԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔՎԱՆՏԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Հայկական պետական մանկավարժական համալսարանի
Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դասախոս
սոցիոլոգիական գիտությունների թեկնածու
yeghiazaryan.s.zh@gmail.com

DOI: 10.54503/978-9939-1-1866-8-362

Համառոտագիր

Ժամանակակից սոցիալական գիտություններում պետությունների անհավասար զարգացման դինամիկան շարունակում է մնալ առանցքային տեսական խնդիրներից մեկը: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ որոշ հասարակություններ և պետություններ կարողանում են համեմատաբար կարճ ժամանակահատվածում իրականացնել խորքային տնտեսական, ինստիտուցիոնալ և քաղաքական վերափոխումներ, մինչդեռ այլ սոցիալական համակարգեր երկար ժամանակ մնում են հարաբերական իներտության պայմաններում: Սոցիալական զարգացման դասական տեսությունները, որոնք հիմնված են գծային և աստիճանական փոփոխության տրամաբանության վրա, հաճախ դժվարանում են բացատրել նման արագ և որակական վերափոխումները, ինչը պահանջում է սոցիալական զարգացման նոր տեսական մոտեցումների ձևավորում:

Հոդվածում ներկայացվում է Քվանտային-դինամիկ զարգացման մոդելը(Quantum-Dynamic Development Model — QDDM)՝ որպես սոցիոլոգիական տեսական և մեթոդաբանական շրջանակ, որի նպատակն է բացատրել արագ պետական զարգացումը՝ սոցիալական համակարգերի ոչ գծային դինամիկայի տեսանկյունից: Մոդելի հիմնական դրույթն այն է, որ սոցիալական զարգացումը պետք է դիտարկել ոչ միայն որպես աստիճանական գործընթաց, այլ նաև որպես համակարգային վերափոխում, որի ընթացքում որոշակի կառուցվածքային պայմանների համընկնման դեպքում սոցիալական համակարգը կարող է անցնել շեմային փոփոխության փուլ և մտնել արագ ինստիտուցիոնալացման գործընթաց:

Մոդելի տեսական հիմքը ձևավորվում է ոչ գծային զարգացման տեսության (non-linear development theory) և բարդ համակարգերի տեսության *(complex systems theory)* համադրմամբ: Այս մոտեցումների համաձայն՝ սոցիալական համակարգերը դիտարկվում են որպես բաց և փոխազդեցություններով պայմանավորված համակարգեր, որոնցում փոփոխությունը հաճախ տեղի է ունենում շեմային անցումների միջոցով: Միաժամանակ մոդելը հենվում է ընդհատված հավասարակշռության մոտեցման (punctuated equilibrium) և կրիտիկական հանգույցների տեսության (critical junctures) վրա, որոնք ցույց են տալիս, որ երկարատև կայունությունից հետո համակարգերը կարող են կարճ ժամանակահատվածում մտնել արագ փոփոխությունների փուլ:

Մոդելի հայեցակարգային նորարարությունը կապված է նաև քվանտային սոցիալական գիտության (quantum social science) գաղափարների մեթոդաբանական կիրառման հետ: Այս շրջանակում սոցիալական գերդիրքայնությունը (social superposition) նկարագրում է այնպիսի վիճակ, երբ սոցիալական համակարգում միաժամանակ գոյակցում են զարգացման մի քանի մրցակցող սցենարներ: Սոցիալական ռեզոնանսը (social resonance) վերաբերում է դերակատարների գործողությունների և քաղաքական օրակարգերի համաժամանակացմանը, որը կարող է արագացնել սոցիալական փոփոխությունների դինամիկան, իսկ սոցիալական գրավիտացիան (social gravitation) նկարագրում է այն գործընթացը, որի ընթացքում ռեսուրսները և քաղաքական նախաձեռնությունները կենտրոնանում են որոշակի զարգացման ուղղության շուրջ՝ ձևավորելով ազդեցության կենտրոններ և մոտեցնելով համակարգը շեմային ինստիտուցիոնալ ընտրության (threshold institutional choice) փուլին:

Քվանտային-դինամիկ զարգացումը ներկայացվում է որպես սոցիոլոգիական նոր տեսական մոտեցում, որը նպատակ ունի ընդլայնել զարգացման սոցիոլոգիայի տեսական հնարավորությունները և առաջարկել սոցիալական արագ փոփոխությունների վերլուծության նոր մեթոդաբանական շրջանակ:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ «քվանտային-դինամիկ» զարգացում, «քվանտային» սոցիոլոգիա, սուպերպոզիցիա, ռեզոնանս, սոցիալական գրավիտացիա, ոչ գծային սոցիալական զարգացում, ցատկային զարգացում:

QUANTUM APPROACH TO LEAP-BASED STATE DEVELOPMENT

SYUZANNA YEGHIAZARYAN

Armenian State Pedagogical University named after Khachatur Abovyan
Department of Sociology and Social Work, Lecturer
PhD in Sociology
yeghiazaryan.s.zh@gmail.com

Abstract

In contemporary social sciences, the dynamics of uneven state development remain one of the key theoretical challenges. Global experience demonstrates that some societies and states are capable of implementing profound economic, institutional, and political transformations within a relatively short period of time, whereas other social systems remain in a state of relative inertia for extended periods. Classical theories of social development, largely based on the logic of linear, gradual change, often struggle to explain such rapid, qualitative transformations, thereby necessitating the development of new theoretical approaches to the study of social development.

This article introduces theQuantum-Dynamic Development Model(QDDM) as a sociological theoretical and methodological framework aimed at explaining rapid state development from the perspective of the non-linear dynamics of social systems. The central premise of the model is that social development should be interpreted not only as a gradual process but also as a systemic transformation in which, under certain structural conditions, a social system may pass through a threshold and enter a period of accelerated institutionalisation.

The theoretical foundation of the model is based on the combination ofnon-linear development theoryandcomplex systems theory. Within these approaches, social systems are viewed as open and interdependent structures in which transformations often occur through threshold transitions. The model also draws on the concepts ofpunctuated equilibriumandcritical junctures, which suggest that after long periods of stability, systems may enter phases of rapid transformation within relatively short time frames.

The conceptual novelty of the model is also related to the methodological application of ideas from quantum social science. In this framework, social superpositiondescribes a situation in which several competing development scenarios coexist within a social system.Social resonancerefers to the synchronisation of actors' actions and political agendas that may accelerate the dynamics of social change. In contrast, social gravitationdescribes the process through which resources and political initiatives concentrate around a particular development trajectory, forming centres of attraction and bringing the system closer to a stage ofthreshold institutional choice.

Thus, quantum-dynamic development is presented as a new sociological theoretical approach that aims to expand the analytical capacity of the sociology of development and to propose a new methodological framework for the analysis of rapid social transformations.

Keywords and phrases: quantum–dynamic development, quantum sociology, superposition, resonance, social gravitation, non–linear social development, leap development.

КВАНТОВЫЙ ПОДХОД К ПРОРЫВНОМУ РАЗВИТИЮ ГОСУДАРСТВА

СЮЗАННА ЕГИАЗАРЯН

Преподаватель кафедры социологии и социальной работы
Армянского государственного Педагогического университета,
кандидат социологических наук
yeghiazaryan.s.zh@gmail.com

Аннотация

В современных социальных науках динамика неравномерного развития государств продолжает оставаться одной из ключевых теоретических проблем. Мировой опыт показывает, что некоторые общества и государства способны за сравнительно короткий период осуществлять глубокие экономические, институциональные и политические преобразования, тогда как другие социальные системы длительное время остаются в состоянии относительной инертности. Классические теории социального развития, основанные преимущественно на логике линейных и постепенных изменений, нередко затрудняются объяснить подобные быстрые и качественные трансформации, что требует формирования новых теоретических подходов к анализу социального развития.

В статье представленаКвантово-динамическая модель развития(Quantum-Dynamic Development Model — QDDM) как социологическая теоретическая и методологическая рамка, направленная на объяснение быстрого государственного развития с точки зрения нелинейной динамики социальных систем. Основное положение модели заключается в том, что социальное развитие следует рассматривать не только как постепенный процесс, но и как системную трансформацию, в ходе которой при совпадении определённых структурных условий социальная система может перейти в фазу пороговых изменений и войти в процесс ускоренной институционализации.

Теоретическая основа модели формируется на основе сочетания теории нелинейного развития (non-linear development theory) и теории сложных систем(complex systems theory). В рамках этих подходов социальные системы рассматриваются как открытые и взаимозависимые структуры, в которых изменения нередко происходят через пороговые переходы. Одновременно модель опирается на концепциипрерывистого равновесия(punctuated equilibrium) и критических узлов(critical junctures), показывающие, что после длительных периодов устойчивости системы могут в относительно короткий срок вступать в фазу быстрых трансформаций.

Концептуальная новизна модели также связана с методологическим использованием идей квантовых социальных наук (quantum social science). В данном контексте социальная суперпозиция (social superposition) описывает состояние, при котором в социальной системе одновременно сосуществуют несколько конкурирующих сценариев развития. Социальный резонанс (social resonance) отражает синхронизацию действий социальных акторов и политических повесток, что может ускорять динамику социальных изменений, тогда как социальная гравитация (social gravitation) описывает процесс

концентрации ресурсов и политических инициатив вокруг определённого направления развития, формируя центры притяжения и приближая систему к стадии порогового институционального выбора (threshold institutional choice).

Таким образом, квантово-динамическое развитие рассматривается как новый социологический теоретический подход, направленный на расширение теоретических возможностей социологии развития и формирование нового методологического инструментария анализа быстрых социальных трансформаций.

Ключевые слова и фразы: квантово-динамическое развитие, квантовая социология, суперпозиция, резонанс, социальная гравитация, нелинейное социальное развитие, скачкообразное развитие.

Ներածություն

Պետությունների անհավասար զարգացման դինամիկան ժամանակակից սոցիալական գիտությունների առանցքային խնդիրներից է: Դասական զարգացման տեսությունները հիմնականում կառուցված են գծային, փուլային և կուտակային փոփոխության տրամաբանության վրա, որի շրջանակում զարգացումը մեկնաբանվում է որպես երկարատև և համեմատաբար շարունակական վերափոխում: Այս մոտեցումներում սոցիալական կառուցվածքներն ու ինստիտուտները փոփոխվում են դանդաղ **[10]**, իսկ զարգացումը դիտվում է որպես աստիճանական առաջընթացի արդյունք **[9]**: Սակայն համաշխարհային զարգացումների համեմատական դիտարկումը ցույց է տալիս, որ ոչ բոլոր սոցիալական համակարգերն են ենթարկվում նման տրամաբանության: Որոշ պետություններ, երկար ժամանակ պահպանելով հարաբերական իներտություն, որոշակի փուլերում անցնում են արագ և որակական վերափոխումների, որոնք վերաձևավորում են տնտեսական, քաղաքական և ինստիտուցիոնալ կարգը: Եթե սոցիալական փոփոխությունը մեկնաբանվում է միայն որպես աստիճանական կուտակման գործընթաց, դժվար է բացատրել այն դեպքերը, երբ սոցիալական համակարգը համեմատաբար կարճ ժամանակահատվածում անցնում է զարգացման նոր՝ որակապես տարբեր կառուցվածքային վիճակի:

Ինստիտուցիոնալ մոտեցումները, հատկապես ուղուց կախվածության տեսության (path dependence) շրջանակում, կարևոր ներդրում են ունեցել զարգացման անհավասարության բացատրության մեջ: Այս մոտեցման համաձայն՝ սոցիալական և տնտեսական համակարգերի զարգացումը մեծապես պայմանավորված է նախկինում ընդունված ինստիտուցիոնալ ընտրություններով, որոնք ժամանակի ընթացքում սահմանափակում կամ ուղղորդում են հետագա զարգացման հնարավորությունները **[1, 6]**: Սակայն այս մոտեցումը միշտ չէ, որ բավարար է՝ բացատրելու այն իրավիճակները, երբ սոցիալական համակարգը կարողանում է հաղթահարել ինստիտուցիոնալ իներցիան և անցնել արագ կառուցվածքային վերափոխումների փուլ: Նման դեպքերում սոցիոլոգիական վերլուծությունը պետք է կենտրոնանա այն հարցի վրա, թե ինչպիսի կառուցվածքային, իմաստային և հարաբերական պայմանների համընկնման դեպքում սոցիալական համակարգում կարող է առաջանալ շեմային արագացում, որի արդյունքում հնարավոր է դառնում զարգացման նոր ինստիտուցիոնալ ուղու ձևավորումը:

Այս հոդվածի *նպատակը* նշված տեսական բացը լրացնելն է՝

առաջարկելով քվանտային-դինամիկ զարգացման մոդելը՝ որպես սոցիոլոգիական բացատրական շրջանակ: Քվանտային եզրը այստեղ օգտագործվում է ոչ թե որպես ֆիզիկական օրենքների փոխադրում սոցիալական գիտություններ, այլ որպես մեթոդաբանական լեզու, որը հնարավորություն է տալիս նկարագրելու սոցիալական համակարգերի բազմակի հնարավորությունների, անորոշության և շեմային որոշումների տրամաբանությունը:

Հոդվածի *հիմնական հարցն* է՝ *ինչ սոցիոլոգիական պայմանների համընկնման դեպքում կարող է ապահովվել պետության արագ զարգացումը և ինչ կառուցվածքային տրամաբանությամբ է ընթանում այդ գործընթացը:*

Հիմնական վարկածը հետևյալն է՝ արագ զարգացումը հնարավոր է այն դեպքում, երբզարգացման տարբեր հնարավորությունների դաշտում գտնվող սոցիալական համակարգըկարողանում է կուտակված ճնշումները վերափոխել ռեզոնանսային համընկնման, կենտրոնացնել ռեսուրսներն ու լեգիտիմությունը՝ բազմաթիվ ուղիներից ընտրելով որոշակի ուղղություն և այդ ուղղությունն ամրագրել զարգացման ինստիտուցիոնալ ընտրությամբ:

Այս իմաստով՝ հոդվածում ներկայացվում է երեք հիմնական խնդրի լուծում:

Առաջինը՝ ձևակերպել արագ պետական զարգացման սոցիոլոգիական բացատրության նոր տեսական լեզու:

Երկրորդը՝ համադրել ոչ գծային զարգացման, բարդ համակարգերի, ընդհատված հավասարակշռության, կրիտիկական հանգույցների, սոցիալական ռեզոնանսի և քվանտային սոցիալական գիտության որոշ գաղափարներ մեկ միասնական վերլուծական կառուցվածքի մեջ:

Երրորդը՝ առաջարկել մոդելի նախնական օպերացիոնալացման այնպիսի ուղիներ, որոնք կարող են հիմք ծառայել հետագա համեմատական ուսումնասիրությունների և կիրառական սոցիոլոգիական վերլուծության համար:

Տեսական հիմքեր

2.1. Ոչ գծային զարգացում և շեմային փոփոխություններ սոցիալական համակարգերում

Ոչ գծային զարգացման գաղափարը ձևավորվել է որպես հակադրություն այն պատկերացմանը, ըստ որի՝ սոցիալական համակարգերը զարգանում են բացառապես աստիճանական կուտակումների միջոցով: Ժամանակակից սոցիալական տեսություններում ավելի ու ավելի հստակ է դառնում, որ հասարակությունները կարող են երկար ժամանակ պահպանել հարաբերական կայունություն, սակայն որոշակի պայմաններում անցնել կտրուկ վերափոխումների փուլերի: Այս իմաստով՝ սոցիալական զարգացումը պետք է հասկանալ ոչ միայն որպես շարունակական գործընթաց, այլև որպես շեմային անցումների շարք **[2, 3]:**

Այս մոտեցումը հատկապես արտահայտված է ընդհատված հավասարակշռության տեսության մեջ (Punctuated Equilibrium Theory), որի համաձայն՝ քաղաքական և ինստիտուցիոնալ համակարգերը բնութագրվում են երկարատև կայունության փուլերով և դրանց հաջորդող կարճատև, բայց ինտենսիվ փոփոխություններով **[8]:** Նման տրամաբանություն է ներկայացնում նաև կրիտիկական հանգույցների մոտեցումը (Critical Junctures Approach),

որի համաձայն՝ պատմության որոշ կարճատև, բայց վճռորոշ պահեր կարող են երկարաժամկետ ձևով ուղղորդել հետագա զարգացման ընթացքը և սահմանափակել այլընտրանքային հնարավորությունները **[4, 5]:** Այսպիսով՝ արագ զարգացումը կարող է դիտարկվել ոչ թե որպես անոմալիա, այլ որպես այնպիսի պահ, երբ համակարգում կուտակված լարվածությունները հատում են կրիտիկական շեմը և հանգեցնում կառուցվածքային վերակազմավորման:

Բարդ համակարգերի տեսությունը (Complex Systems Theory) լրացնում է այս ըմբռնումը՝ սոցիալական համակարգերը դիտարկելով որպես բաց, փոխկապակցված և ինքնակազմակերպվող ամբողջություններ: Այդ համակարգերում փոքր փոփոխությունները որոշակի պայմաններում կարող են առաջացնել լայնածավալ փոփոխություններ, իսկ զարգացումը հաճախ պայմանավորված է հետադարձ կապերով, ոչ կանխատեսելի փոխազդեցություններով և նոր առաջացող **(emergent)** հատկություններով **[2, 3]:** Հենց այդ պատճառով սոցիալական փոփոխությունների ուսումնասիրությունը չի կարող սահմանափակվել միայն գծային պատճառականությամբ:

ՔԴԶՄ-ի տեսական տրամաբանության մեջ ոչ գծայնությունը հանդես է գալիս որպես հիմնարար մեկնաբանական կետ: Եթե պետության զարգացումը դիտարկվում է որպես բարդ սոցիալական համակարգի դինամիկ անցում, ապա արագացումը պետք է մեկնաբանել ոչ թե որպես պարզապես տեմպի աճ, այլ որպես կառուցվածքային որակական վերափոխում: Այս մոտեցումը հատկապես նշանակալի է փոքր պետությունների և անցումային հասարակությունների ուսումնասիրության համար, քանի որ հենց այստեղ առավել տեսանելի է դառնում, որ զարգացումը միշտ չէ, որ ընթանում է համաչափ, կանխատեսելի և աստիճանական կերպով:

Քվանտային սոցիոլոգիա և սոցիալական սուպերպոզիցիա

Քվանտային սոցիոլոգիական մոտեցման մեջ «քվանտային» եզրը չի նշանակում ֆիզիկական օրենքների ուղղակի տեղափոխում սոցիալական իրականություն: Այն այստեղ օգտագործվում է որպես մեթոդաբանական լեզու՝ սոցիալական անորոշությունը, բազմակի հնարավորությունները և որոշումների շեմային բնույթը նկարագրելու համար **[7, 14]:** Այս մոտեցման արժեքը ոչ թե ֆիզիկայի և սոցիոլոգիայի պարզ համեմատության մեջ է, այլ այն հանգամանքում, որ այն առաջարկում է նոր լեզու սոցիալական իրականության այն վիճակների համար, որտեղ միաժամանակ գոյակցում են տարբեր հնարավորություններ, բայց դեռևս ոչ մեկը վերջնականապես չի ամրագրվել:

Այս շրջանակումսոցիալական գերդիրքայնությունընշանակում է այնպիսի կառուցվածքային վիճակ, երբ սոցիալական համակարգում միաժամանակ առկա են զարգացման մի քանի մրցակցող ուղղություններ **[14]**: Այդպիսի իրավիճակները հատկապես բնորոշ են անցումային փուլերին, երբ տարբեր քաղաքական նախագծեր, ինստիտուցիոնալ ռազմավարություններ և զարգացման պատկերացումներ գոյակցում են՝ առանց վերջնական գերակայության: Այս պայմաններում հասարակությունը գտնվում է ոչ թե միանշանակ կանխորոշված զարգացման ուղու վրա, այլտարբեր զարգացման հնարավորությունների դաշտում**:**

ՔԴԶՄ-ի համար այս հասկացությունը հիմնարար նշանակություն ունի, քանի որ այն հնարավորություն է տալիս արագ զարգացումը

հասկանալու որպես սոցիալական համակարգում առկա տարբեր զարգացման հնարավորությունների դաշտի աստիճանական փակման գործընթաց: Որոշիչ պահը գալիս է այն ժամանակ, երբ ինստիտուցիոնալ ընտրությունը կամ քաղաքական որոշումը այդ հնարավորություններից մեկը ամրագրում է և վերածում գերակայող զարգացման ուղղության: Այս իմաստով՝ ընտրությունը չի կատարվում դատարկ միջավայրում, այլ տեղի է ունենում ճնշումների, ռեզոնանսների, ուժային հարաբերությունների և մրցակցող օրակարգերի փոխազդեցության պայմաններում:

Ա. Վենդտի և քվանտային սոցիալական գիտության այլ ներկայացուցիչների աշխատանքները կարևոր են հատկապես այն առումով, որ սոցիալական իրականության մեջ ընդունվում է անորոշության և ոչ լիովին կանխորոշված լինելու սկզբունքը **[14, 15, 16]**: ՔԴԶՄ-ը այս գաղափարները չի կրկնում ուղղակիորեն, այլ սոցիոլոգիական վերլուծության շրջանակում վերաիմաստավորում է դրանք՝ կապելով զարգացման, ինստիտուցիոնալ ընտրության և պետական վերափոխման գործընթացների հետ:

Սոցիալական ռեզոնանս, սոցիալական գրավիտացիա և զարգացման մեխանիզմները

Եթե սուպերպոզիցիան նկարագրում է բազում հնարավորությունները, ապա սոցիալական ռեզոնանսը բացատրում է, թե ինչու և ինչպես են այդ բազմությունից որոշ ուղղություններ սկսում ուժեղանալ: Ռեզոնանսը կարելի է հասկանալ որպես դերակատարների, արժեքների, օրակարգերի և ինստիտուցիոնալ արձագանքների համաժամանակացված փոխազդեցություն, որի հետևանքով սոցիալական փոփոխությունը ստանում է նոր ուղղվածություն և արագացում **[11, 12]:**

Հ. Ռոզայի աշխատություններում *ռեզոնանսը* ներկայացվում է որպես աշխարհի հետ այնպիսի փոխհարաբերություն, որի ընթացքում առաջանում են արձագանք, փոխազդեցություն և իմաստային շարժում, այլ ոչ թե միայն տեխնիկական վերահսկողություն [11]: ՔԴԶՄ-ը այս գաղափարը տեղափոխում է պետական զարգացման մակարդակ՝ ցույց տալու համար, որ արագ զարգացումը հնարավոր չէ ապահովել միայն կառավարման տեխնիկական կարողություններով: Այն պահանջում է, որ հասարակության տարբեր մակարդակներում՝ քաղաքական, ինստիտուցիոնալ, արժեքային և հանրային, առաջանա համահունչ արձագանք:

Սոցիալական գրավիտացիան այս տրամաբանության շարունակությունն է: Այն նկարագրում է այն գործընթացը, որի ընթացքում ռեսուրսները, լեգիտիմությունը, ուշադրությունը և քաղաքական նախաձեռնությունները կենտրոնանում են որոշակի զարգացման ուղղության շուրջ: Այս կենտրոնացումը աստիճանաբար ձևավորում է ազդեցության հանգույցներ և ուժեղացնում տվյալ ուղղության գերակայության հնարավորությունը: Այս իմաստով՝ սոցիալական գրավիտացիան կարելի է դիտարկել որպես սոցիալական ռեզոնանսի կառուցվածքային հետևանք և արագացման մեխանիզմ:

Այս երկու հասկացությունների համադրությունը հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես կարող է առաջանալ ցատկային զարգացումը: Այն չի սկսվում այն պահին, երբ կառավարությունը հայտարարում է բարեփոխում, և չի ավարտվում դրանց արագ տեխնիկական իրականացմամբ: Այն հնարավոր է դառնում այն ժամանակ, երբ մի կողմից համակարգում

առկա են**տարբեր զարգացման հնարավորություններ**, իսկ մյուս կողմից այդ հնարավորություններից մեկը ստանում է ռեզոնանսային համաժամանակացում և գրավիտացիոն կենտրոնացում: Հենց այդ պահին է ձևավորվում շեմային անցման կառուցվածքային հնարավորությունը:

Այս բաժնի տեսական կարևորությունը նաև այն է, որ այն արագ զարգացման խնդիրը տեղափոխում է սոցիալական հարաբերությունների վերլուծության դաշտ: Այստեղ արագացումը այլևս չի դիտարկվում միայն որպես տնտեսական աճի տեմպ կամ վարչական արդյունավետություն, այլ որպես իմաստային, ինստիտուցիոնալ և լեգիտիմացիոն ռեժիմների համադրման արդյունք: Այս իմաստով ՔԴԶՄ-ը փորձում է զարգացման սոցիոլոգիայի մեջ ներմուծել ավելի խորքային բացատրություն, որտեղ արագությունը դիտարկվում է որպես սոցիալական պայմանների արդյունք, այլ ոչ թե ինքնուրույն չափանիշ:

Քվանտային-դինամիկ զարգացման մոդելը

Քվանտային-դինամիկ զարգացման մոդելը ներկայացվում է որպես սոցիոլոգիական վերլուծական շրջանակ, որի նպատակն է՝ բացատրել արագ պետական զարգացման ոչ գծային և շեմային դինամիկան: Մոդելը հիմնված է այն ենթադրության վրա, որ սոցիալական համակարգերում արագ զարգացումը պատահական արագացում կամ միայն քաղաքական և տնտեսական գործոնների արդյունք չէ, այլ ձևավորվում է կառուցվածքային մեխանիզմների որոշակի համադրության արդյունքում:

ՔԴԶՄ-ի կառուցվածքային շղթան ներառում է ինը փոխկապակցված բաղադրիչ՝ սոցիալական գերդիրքայնություն, համակարգային ճնշումների կուտակում, սոցիալական ռեզոնանս, սոցիալական գրավիտացիայի կենտրոնների ձևավորում, շեմային ինստիտուցիոնալ ընտրություն, արագ ինստիտուցիոնալացում, լեգիտիմության վերարտադրություն, կայունացման ստուգում և նոր հավասարակշռության ձևավորում: Այս շղթան առաջարկվում է ոչ թե որպես մեխանիկական փուլայնություն, այլ որպես վերլուծական կառուցվածք, որի միջոցով հնարավոր է հասկանալ, թե ինչպես են**տարբեր զարգացման հնարավորությունները** որոշակի պայմաններում վերածվում կոնկրետ ինստիտուցիոնալ զարգացման ուղու:

Գերդիրքայնության փուլում համակարգը պարունակում է մի քանի մրցակցող զարգացման սցենարներ: Ճնշումների կուտակման փուլում սոցիալական, տնտեսական, ինստիտուցիոնալ կամ տեխնոլոգիական լարվածությունները մեծացնում են կառուցվածքային վերափոխման անհրաժեշտությունը: Ռեզոնանսի փուլում դերակատարների օրակարգերը, արժեքային լեզուները և քաղաքական ազդակները մտնում են համահունչ փոխազդեցության մեջ: Գրավիտացիայի փուլում ռեսուրսներն ու լեգիտիմությունը կենտրոնանում են որոշակի զարգացման ուղղության շուրջ՝ ձևավորելով ազդեցության այնպիսի հանգույցներ, որոնք ուժեղացնում են տվյալ ուղղության իրականացման հավանականությունը: Դրանից հետո շեմային ինստիտուցիոնալ ընտրությունը ամրագրում է գերակայող զարգացման ուղին, որից հետո հնարավոր է դառնում արագ ինստիտուցիոնալացման փուլը: Վերջին փուլերում նոր ռեժիմը վերարտադրվում է լեգիտիմության միջոցով, անցնում կայունացման ստուգման փուլ և ձևավորում հարաբերականորեն նոր հավասարակշռություն:

Մոդելի կենտրոնական պնդումն այն է, որ ցատկային զարգացումը

հնարավոր է այն ժամանակ, երբ սոցիալական համակարգը ոչ միայն գտնվում է կուտակված ճնշումների ազդեցության տակ, այլ նաև կարողանում է այդ ճնշումները վերածել համաժամանակացված ռեզոնանսային դինամիկայի, կենտրոնացնել ռեսուրսներն ու լեգիտիմությունը որոշակի զարգացման ուղղության շուրջ և այդ ուղղությունը ամրագրել շեմային ինստիտուցիոնալ ընտրության միջոցով: Այս իմաստով՝ արագ զարգացումը ներկայացվում է որպես կառուցվածքային անցում, այլ ոչ թե կառավարման արագացում:

ՔԴԶՄ-ի տեսական նշանակությունը նրա՝ տարբեր տեսական ավանդույթներ միավորելն է՝ պահպանելով սոցիոլոգիական կենտրոնական հարցադրումը: Մոդելը չի հավակնում լինել զարգացման բոլոր դեպքերի համընդհանուր բացատրություն, այլ ներկայացվում է որպես վերլուծական շրջանակ, որը իր տրամաբանությամբ մոտ է սոցիոլոգիայում հայտնի միջին մակարդակի տեսությունների մոտեցմանը **[9]:** Այն կիրառվում է այնպիսի սոցիալական իրավիճակների վերլուծության համար, որտեղ առկա են արագ, շեմային և կառուցվածքային վերափոխումներ: Սա կարևոր է, քանի որ զարգացումը հաճախ բացատրվում է կամ չափազանց լայն քաղաքակրթական տեսություններով, կամ չափազանց նեղ քաղաքական գործիքակազմով: ՔԴԶՄ-ը փորձում է զբաղեցնել այդ երկուսի միջև գտնվող, սակայն տեսականորեն հիմնավորված դիրք:

Մոդելի կիրառական արժեքը սոցիոլոգիական լեզու առաջարկելն է, որի միջոցով հնարավոր է հասկանալ ոչ միայն այն, թե ինչու է համակարգը փոխվել, այլև այն, թե ինչ պայմանների դեպքում տվյալ երկրում կարող է ձևավորվել արագ զարգացման իրական հնարավորություն: Այսպիսով՝ ՔԴԶՄ-ը հանդես է գալիս ոչ միայն որպես հետադարձ բացատրության գործիք, այլև որպես նախաշեմային վերլուծության շրջանակ:

Ուսումնասիրության մեթոդներ

ՔԴԶՄ-ի մեթոդաբանական հիմքը ձևավորվում է այն նախադրույթի վրա, որ արագ պետական զարգացումը չի կարող ուսումնասիրվել մեկ մեթոդի միջոցով: Ոչ գծային և շեմային սոցիալական գործընթացների վերլուծությունը պահանջում է բազմաշերտ և ինտեգրված հետազոտական մոտեցում, որը հնարավորություն է տալիս միաժամանակ դիտարկելու կառուցվածքային փոփոխությունները և ինստիտուցիոնալ որոշումների ժամանակային համընկնումները:

Այդ պատճառով սույն հետազոտությունը կառուցված է համակցված որակական մեթոդաբանության վրա՝ բազմամեթոդ և ինտեգրված վերլուծական մոտեցման կիրառմամբ: Հետազոտության շրջանակում համադրվել են ինստիտուցիոնալ փաստաթղթերի վերլուծությունը, դիսկուրս վերլուծությունը, գործընթացի հետագծման մեթոդը (process tracing) **[4]** և սոցիալական հարաբերությունների կառուցվածքային վերլուծությունը: Նման մեթոդաբանական կառուցվածքը հնարավորություն է տալիս ապահովելու վերլուծության համապարփակություն և բարձրացնել արդյունքների մեկնաբանական հավաստիությունը:

Մեթոդների այս համադրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ արագ զարգացումը չի կարող դիտարկվել միայն որպես իրադարձությունների հաջորդականություն կամ միայն որպես քաղաքական հայտարարությունների արդյունք: Այն պահանջում է կառուցվածքային, իմաստային և հարաբերական

մակարդակների համակցված ուսումնասիրություն:

Հետազոտական նյութը ներառում է բաց աղբյուրներում հասանելի պետական ռազմավարական փաստաթղթեր, զարգացման ծրագրեր, քաղաքական ելույթներ, միջազգային կազմակերպությունների հաշվետվություններ և հանրային դիսկուրսի նյութեր: Տվյալների ընտրությունն իրականացվել է նպատակային սկզբունքով՝ այնպիսի աղբյուրների ընդգրկմամբ, որոնք հնարավորություն են տալիս վերանայելու արագ զարգացման ենթադրվող մեխանիզմները և դիտարկելու դրանք միաժամանակ ինստիտուցիոնալ, արժեքային և փոխազդեցության մակարդակներում:

Ինստիտուցիոնալ փաստաթղթերի վերլուծությունը ներառում է պետական ռազմավարական փաստաթղթերի, քաղաքական որոշումների և կառավարման կառուցվածքների ժամանակագրական ուսումնասիրություն: Դրա նպատակը պարզելն է, թե որ փուլերում են որոշումները դադարում ունենալ մասնատված կամ աստիճանական բնույթ և ձեռք են բերում շեմային բնույթ: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս տարբերելու սովորական վարչական կամ քաղաքական բարեփոխումները այնպիսի որոշումներից, որոնք գործում են որպես համակարգային անցման առանցքային հանգույցներ: Դիսկուրս վերլուծությունը կենտրոնանում է հանրային խոսքի, քաղաքական հռետորաբանության և մեդիա օրակարգերի վրա՝ սոցիալական ռեզոնանսի ձևավորման գործընթացը հասկանալու նպատակով: Եթե արագացումը իսկապես ենթադրում է համաժամանակացում, ապա այն պետք է գտնել ոչ միայն քաղաքական փաստաթղթերում, այլև այն իմաստային ձևակերպումներում, որոնց միջոցով համակարգը սկսում է ներկայացնել իրեն, իր ապագան և իր վերափոխման տրամաբանությունը: Այդ պատճառով դիսկուրսը դիտարկվում է ոչ թե որպես երկրորդային արտացոլում, այլ որպես կառուցվածքային գործոն:

Հետազոտության մեջ կիրառվում է նաև գործընթացի հետագծման մեթոդը (process tracing) **[4],** որը թույլ է տալիս բացահայտել այն պատճառահետևանքային շղթաները, որոնց միջոցով սոցիալական ճնշումները, դերակատարների փոխազդեցությունները և ինստիտուցիոնալ որոշումները ձևավորում են շեմային փոփոխություններ: Այս մեթոդը հատկապես կարևոր է, քանի որ հոդվածի նպատակը ոչ միայն փոփոխության արձանագրումն է, այլև դրա ներքին հաջորդականության և մեխանիզմների բացատրությունը:

Կառուցվածքային վերլուծության կիրառումը բխում է այն դիտարկումից, որ արագ զարգացումը չի կարող բացատրվել մեկ փոփոխականով կամ մեկ առանձին գործոնով: Այն ձևավորվում է պայմանների համադրությամբ, և հենց այդ պատճառով վերլուծությունն ուղղվում է ոչ թե մեկ պատճառի որոնմանը, այլ այն սոցիալական համակցությունների բացահայտմանը, որոնց դեպքում հնարավոր է շեմային արագացում **[2, 3],** քանի որ, կառուցվածքային մոտեցման համաձայն, սոցիալական արդյունքները ձևավորվում են փոխկապակցված պայմանների համադրությունների արդյունքում:

Քանի որ հոդվածի խնդիրը նոր տեսական ուղղության կառուցումն է, այստեղ ներկայացվող հետազոտությունը կատարված է որպես երկրորդային աղբյուրների վրա հիմնված, համեմատական և համակարգային ուսումնասիրություն:

Մոդելի կիրառական զարգացման նպատակով առաջարկվում են նաև երեք վերլուծական ցուցիչներ՝ փուլային համապատասխանության

ցուցիչ (PAS), ռեզոնանսային համաժամանակացման ինդեքս (RSI) և գրավիտացիոն կենտրոնացման ինդեքս (GCI): Այս ցուցիչները ներկայացվում են որպես փորձնական օպերացիոնալացման գործիքներ, այլ ոչ թե որպես վերջնականապես վավերացված սանդղակներ: Դրանց նպատակը մոդելի մեխանիզմները հետազոտական մակարդակում համադրելի դարձնելն է և հետագա ուսումնասիրությունների համար օպերացիոնալ հիմք ստեղծելը: PAS–ը վերաբերում է փուլային շղթայի ամբողջականության դիտարկմանը, RSI–ը՝ արժեքային լեզվի, օրակարգի և ինստիտուցիոնալ արձագանքի համաժամանակացման աստիճանին, իսկ GCI–ը՝ ռեսուրսների և լեգիտիմության կենտրոնացման ուժգնությանը: Հոդվածում այս ցուցիչները ներկայացվում են որպես վերլուծական առաջարկներ, որոնց նպատակն է մոդելի հիմնական մեխանիզմները դարձնել հետազոտական մակարդակում ճանաչելի և հետագա ուսումնասիրությունների համար ստեղծել օպերացիոնալ հիմք:

Արդյունքներ և քննարկում

Կատարված համակցված որակական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արագ պետական զարգացումը առավել համոզիչ կերպով բացատրվում է այն դեպքերում, երբ սոցիալական համակարգում տեղի են ունենում ոչ թե առանձին բարեփոխումներ, այլ փոխկապակցված գործընթացների համադրում: Վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել երեք հիմնական օրինաչափություն, որոնք բացատրում են արագ զարգացման սոցիալական մեխանիզմները:

Առաջին օրինաչափությունը վերաբերում է արագացման նախաշեմային փուլին: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման իրավիճակներում սոցիալական համակարգը սովորաբար գտնվում է զարգացման տարբեր հնարավորությունների վիճակում, որտեղ մի քանի տարբեր զարգացման ուղղություններ մրցակցում են միմյանց հետ: Այս վիճակը համապատասխանում է սոցիալական գերդիրքայնության հասկացությանը և ցույց է տալիս, որ արագ զարգացումը գրեթե երբեք չի սկսվում լիովին հստակեցված ռազմավարական ուղուց: Ընդհակառակը, համակարգը նախ անցնում է բազմակի հնարավորությունների փուլով, որտեղ տարբեր զարգացման նախագծեր մրցակցում են գերակայության համար:

Երկրորդ օրինաչափությունը վերաբերում է սոցիալական ռեզոնանսի ձևավորմանը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ զարգացման տարբեր հնարավորությունների պայմաններում արագ զարգացումը հնարավոր է դառնում միայն այն դեպքում, երբ ձևավորվում է ռեզոնանսային համընկնում քաղաքական օրակարգի, հասարակական սպասումների և ինստիտուցիոնալ արձագանքի միջև: Եթե հասարակության տարբեր մակարդակներում փոփոխության լեզուն, քաղաքական ազդակները և ինստիտուցիոնալ որոշումները չեն համընկնում, զարգացումը մնում է մասնատված և չի հասնում շեմային արագացման: Այս իմաստով՝ սոցիալական ռեզոնանսը հանդես է գալիս որպես արագ զարգացման անհրաժեշտ, սակայն ինքնին ոչ բավարար պայման **[11]:**

Երրորդ օրինաչափությունը վերաբերում է սոցիալական գրավիտացիայի ձևավորմանը: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ռեզոնանսային համընկնումը կառուցվածքային արդյունք է տալիս միայն այն դեպքում, երբ ռեսուրսներն ու լեգիտիմությունը սկսում են կենտրոնանալ որոշակի զարգացման ուղղության շուրջ: Այս գործընթացը կարելի է նկարագրել

սոցիալական գրավիտացիայի հասկացության միջոցով: Եթե սոցիալական ռեզոնանսը նշանակում է գաղափարների, սպասումների և գործողությունների համընկնում, ապա սոցիալական գրավիտացիան արտահայտում է այդ համընկնման նյութական, ինստիտուցիոնալ և քաղաքական կուտակումը: Առանց նման կենտրոնացման՝ նույնիսկ բարձր ռեզոնանս ունեցող օրակարգերը կարող են մնալ անկայուն և չինստիտուցիոնալացված:

Այս երեք մեխանիզմների համադրությունն է ձևավորում արագ զարգացման կառուցվածքային հնարավորությունը: Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ արագ զարգացումը պետք է դիտարկել ոչ թե որպես առանձին քաղաքական նախաձեռնությունների արդյունք, այլ որպես սոցիալական համակարգի ներքին կապերի վերակազմավորման գործընթաց: Այս իմաստով՝ Քվանտային–դինամիկ զարգացման մոդելն առաջարկում է զարգացման դիտարկման այլընտրանքային մոտեցում՝ կուտակային և աստիճանական փոփոխությունների պատկերացումից անցում դեպի շեմային սոցիալական փոփոխությունների վերլուծություն:

Մոդելի կարևոր տեսական արդյունքներից մեկը սոցիալական գերդիրքայնության օպերացիոնալացումն է: Այստեղ գերդիրքայնությունը ներկայացվում է ոչ թե որպես փոխաբերական պատկերացում, այլ որպես վերլուծական վիճակ, որը կարող է նույնականացվել օրակարգային բազմազանության, ինստիտուցիոնալ երկիմաստության, լեգիտիմության մրցակցության և զարգացման սցենարների համաժամանակյա գոյակցության միջոցով **[14]:** Սա կարևոր է, որովհետև թույլ է տալիս արագ զարգացման նախաշեմային փուլը դիտարկել ոչ միայն հետադարձ մեկնաբանությամբ, այլ նաև ընթացիկ սոցիոլոգիական վերլուծության մակարդակում:

Մոդելի երկրորդ կարևոր տեսական արդյունքը սոցիալական ռեզոնանսի և սոցիալական գրավիտացիայի համադրությունն է: Վերլուծությունը ցույց է տալիս, որ արագ զարգացումը հնարավոր է ոչ միայն սոցիալական կամ տնտեսական ճնշումների առկայությամբ, այլ նաև այն դեպքում, երբ հասարակության տարբեր մակարդակներում ձևավորվում է ռեզոնանսային համընկնում, որի արդյունքում ռեսուրսներն ու լեգիտիմությունը սկսում են կենտրոնանալ որոշակի զարգացման ուղղության շուրջ: Այս համադրությունն է ստեղծում այն պայմանները, որոնցում հնարավոր է շեմային ինստիտուցիոնալ անցում:

Կիրառական մակարդակում մոդելը հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչ պայմաններում կարող է երկրում ձևավորվել ցատկային զարգացման հնարավորություն: Ցատկային զարգացումը չի սկսվում այն պահին, երբ կառավարությունը հայտարարում է բարեփոխում, և չի ավարտվում դրա արագ տեխնիկական իրականացմամբ: Այն ձևավորվում է այն դեպքում, երբ մի կողմից համակարգում առկա են զարգացման տարբեր հնարավորություններ, իսկ մյուս կողմից այդ հնարավորություններից մեկը սկսում է ստանալ ռեզոնանսային համընկնում և սոցիալական գրավիտացիայի կենտրոնացում: Այդ իրավիճակում ինստիտուցիոնալ ընտրությունը դառնում է ոչ թե ձևական քայլ, այլ կառուցվածքայինորեն նախապատրաստված անցում:

Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ արագ պետական զարգացումը կարելի է մեկնաբանել որպես սոցիալական համակարգի ներքին կառուցվածքի վերադասավորման գործընթաց: Քվանտային–դինամիկ զարգացման մոդելը հնարավորություն է տալիս բացահայտելու

այդ վերադասավորման մեխանիզմները և արագ զարգացումը ներկայացնելու որպես սոցիոլոգիականորեն բացատրելի սոցիալական գործընթաց:

Այսպիսով՝ իրականացված վերլուծությունը ցույց է տալիս, որ արագ պետական զարգացումը կարող է դիտարկվել որպես շեմային սոցիալական անցում, որը ձևավորվում է զարգացման տարբեր հնարավորությունների, սոցիալական ռեզոնանսի և սոցիալական գրավիտացիայի փոխկապակցված ազդեցության արդյունքում: Այս արդյունքները թույլ են տալիս Քվանտային–դինամիկ զարգացման մոդելը դիտարկել ոչ միայն որպես տեսական կառուցվածք, այլ նաև որպես սոցիալական փոփոխությունների վերլուծության շրջանակ, որը բացատրում է, թե ինչ պայմաններում կարող են ձևավորվել արագ զարգացման կառուցվածքային հնարավորությունները:

Սահմանափակումներ

Քվանտային–դինամիկ զարգացման մոդելի բացատրական ներուժը գնահատելիս անհրաժեշտ է հստակ նշել նաև սահմանափակումները, քանի որ դրանց ճշգրիտ ձևակերպումն է ուժեղացնում մոդելի գիտական արժանահավատությունը:

Առաջին սահմանափակումը վերաբերում է «քվանտային» բառապաշարի մեթոդաբանական կարգավիճակին: Թեև այս լեզուն արդյունավետ է սոցիալական անորոշությունը, տարբեր զարգացման հնարավորությունները և շեմային որոշումների տրամաբանությունը նկարագրելու համար, ամեն դեպքում այն պահանջում է տեսական զգուշություն, որպեսզի չընկալվի որպես ֆիզիկական օրենքների ուղղակի տեղափոխում սոցիոլոգիայի ոլորտ: Ուստի մոդելի վավերությունը պետք է որոնել ոչ թե բնական գիտությունների հետ արտաքին նմանությունների մեջ, այլ սոցիալական իրականության անորոշ և ոչ գծային կառուցվածքի սոցիոլոգիական մեկնաբանության մեջ **[11, 14]:**

Երկրորդ սահմանափակումը վերաբերում է օպերացիոնալացման և չափելիության խնդրին: Հոդվածում առաջարկված PAS, RSI և GCI ցուցիչները ներկայումս ներկայացվում են որպես փորձնական վերլուծական գործիքներ, այլ ոչ որպես վերջնականապես վավերացված չափման սանդղակներ: Հետևաբար դրանց գիտական ամրապնդման համար անհրաժեշտ է հետագա հետազոտություններում մշակել ավելի հստակ օպերացիոնալ չափանիշներ, համեմատական կոդավորման արձանագրություն և վերարտադրելի կիրառման ընթացակարգ:

Երրորդ սահմանափակումը կապված է մոդելի էմպիրիկ ընդհանրացման ծավալի հետ: Թեև ՔԴԶՄ–ը կառուցված է փոխանցելի տեսական տրամաբանության վրա, դրա բացատրական ուժը ներկայումս ձևակերպված է հիմնականում համեմատական և մեխանիզմային մակարդակում: Հետևաբար հետագա ուսումնասիրություններում անհրաժեշտ է այն փորձարկել ավելի լայն դեպքային շրջանակում՝ տարբեր ինստիտուցիոնալ ռեժիմների, մշակութային միջավայրերի և զարգացման ուղիների համեմատությամբ: Միայն այդ դեպքում հնարավոր կլինի ավելի համոզիչ կերպով տարբերակել մոդելի համընդհանուր և համատեքստային բաղադրիչները:

Չորրորդ սահմանափակումը վերաբերում է պատճառականության ձևակերպմանը: ՔԴԶՄ–ը հիմնված է ոչ թե փոփոխականների գծային պատճառականության, այլ կառուցվածքային սոցիալական

պատճառականության տրամաբանության վրա **[2, 3]:** Այս մոտեցումը տեսականորեն ուժեղացնում է մոդելը, քանի որ հնարավորություն է տալիս բարդ սոցիալական անցումները հասկանալու որպես մի շարք պայմանների համադրության արդյունք: Սակայն միևնույն ժամանակ դա սահմանափակում է մոդելի կիրառությունը այն հետազոտական միջավայրերում, որտեղ առաջնահերթություն է տրվում միայն փոփոխականների վրա հիմնված կամ խիստ քանակական վերլուծություններին**:**

Հինգերորդ սահմանափակումը կապված է ժամանակային խնդրի հետ: Արագ զարգացման գործընթացները հաճախ առավել հստակ են երևում հետադարձ վերլուծության ընթացքում, մինչդեռ ՔԴԶՄ-ի առավել հավակնոտ նպատակը դրանց ընթացիկ նույնականացումն է: Այդ պատճառով մոդելի հետագա զարգացումը պահանջում է այնպիսի մեթոդաբանական գործիքների հստակեցում, որոնք թույլ կտան ոչ միայն բացատրել արագ զարգացումը, այլ նաև ընթացիկ վերլուծության մակարդակում հայտնաբերել դրա ձևավորման նախաշեմային փուլերը:

Այսպիսով՝ ՔԴԶՄ-ի սահմանափակումները չեն արժեզրկում մոդելի տեսական կարևորությունը: Ընդհակառակը, դրանք սահմանում են այն հետազոտական հորիզոնը, որի շրջանակում մոդելը կարող է հետագայում ամրապնդվել, ճշգրտվել և վերածվել ավելի լայն կիրառելիություն ունեցող սոցիոլոգիական վերլուծական գործիքի:

Եզրակացություն

Քվանտային-դինամիկ զարգացման մոդելը սույն հոդվածում ներկայացվում է որպես սոցիոլոգիական տեսական և մեթոդաբանական շրջանակ, որը հնարավորություն է տալիս արագ պետական զարգացումը մեկնաբանել ոչ թե որպես բացառիկ հաջողություն, այլ որպես որոշակի կառուցվածքային մեխանիզմների համադրության արդյունք: Մոդելի հիմնական պնդումն այն է, որ արագ զարգացումը ձևավորվում է այն դեպքում, երբ սոցիալական համակարգը գտնվում է բազմընտրանքային գերդիրքայնության վիճակում, համակարգային ճնշումները խտանում են, սոցիալական ռեզոնանսը ստեղծում է համաժամանակացված փոխազդեցություն, սոցիալական գրավիտացիան կենտրոնացնում է ռեսուրսներն ու լեգիտիմությունը, իսկ շեմային ինստիտուցիոնալ ընտրությունը ամրագրում է գերակա զարգացման ուղին: Հոդվածի հիմնական գիտական արդյունքն այն է, որ արագ պետական զարգացումը ներկայացվում է որպես սոցիոլոգիական տեսանկյունից մեկնաբանելի օրինաչափություն, այլ ոչ պարզապես պատմական պատահականություն: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս արագ զարգացումը դիտարկելու որպես սոցիալական համակարգի ներսում ձևավորվող կառուցվածքային անցում, որը պայմանավորված է սոցիալական հարաբերությունների, իմաստային օրակարգերի և ինստիտուցիոնալ որոշումների համադրությամբ:

ՔԴԶՄ-ի տեսական արժեքն այն է, որ մեկ ընդհանուր սոցիոլոգիական շրջանակում մոդելը միավորում է զարգացման սոցիոլոգիայի, բարդ համակարգերի մոտեցումների, քվանտային սոցիալական գիտության մեթոդաբանական լեզվի և ինստիտուցիոնալ փոփոխությունների վերլուծության գաղափարները: Այս համադրությունը հնարավորություն է տալիս արագ զարգացումը հասկանալու ոչ միայն որպես կառավարչական կամ տնտեսական

գործընթաց, այլ որպես սոցիալական համակարգի ներքին վերադասավորման և լեգիտիմության կենտրոնացման արդյունք: Միաժամանակ մոդելը ունի նաև կիրառական նշանակություն. այն առաջարկում է վերլուծական մոտեցում, որի միջոցով հնարավոր է բացահայտել այն սոցիալական պայմանները, որոնց համընկնման դեպքում կարող են ձևավորվել արագ և շեմային զարգացման հնարավորություններ: Հետևաբար ՔԴՋՄ-ը կարող է ծառայել որպես ոչ միայն գիտական վերլուծության շրջանակ, այլ նաև սոցիոլոգիական հիմք արագ պետական զարգացման ռազմավարությունների մշակման համար, հատկապես՝ այն պետությունների դեպքում, որոնք ձգտում են ապահովել կառուցվածքային և ցատկային առաջընթաց:

ՔԴՋՄ-ի տեսական կառուցվածքը և առաջարկվող մեթոդաբանական շրջանակը ցույց են տալիս, որ մոդելը կարող է կիրառվել ոչ միայն ակադեմիական վերլուծության մեջ, այլ նաև որպես սոցիոլոգիական վերլուծական հիմք պետական զարգացման ռազմավարությունների մշակման և կառուցվածքային ցատկային առաջընթացի պլանավորման գործընթացներում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Arthur W. B.,Competing technologies, increasing returns, and lock-in by historical events, The Economic Journal, London, 1989, Vol. 99, No. 394, pp. 116–131.
2. Byrne D., Complexity theory and the social sciences: An introduction, London, Routledge, 1998, 198 pp.
3. Byrne D., Callaghan G.,Complexity theory and the social sciences: The state of the art, London, Routledge, 2014, 240 pp.
4. Capoccia G., Kelemen R. D.,The study of critical junctures: Theory, narrative, and counterfactuals in historical institutionalism, World Politics, Cambridge, 2007, Vol. 59, No. 3, pp. 341–369.
5. Collier R. B., Collier D.,Shaping the political arena: Critical junctures, the labor movement, and regime dynamics in Latin America, Princeton, Princeton University Press, 1991, 880 pp.
6. David P. A.,Clio and the economics of QWERTY, The American Economic Review, Nashville, 1985, Vol. 75, No. 2, pp. 332–337.
7. Haven E., Khrennikov A., Quantum social science, Cambridge, Cambridge University Press, 2013, 354 pp.
8. Krasner S. D., Approaches to the state: Alternative conceptions and historical dynamics, Comparative Politics, New York, 1984, Vol. 16, No. 2, pp. 223–246.
9. Merton R. K.,Social theory and social structure, New York, Free Press, 1968, 702 pp.
10. Parsons T.,Societies: Evolutionary and comparative perspectives, Englewood Cliffs, Prentice-Hall, 1966, 146 pp.
11. Rosa H.,Resonance: A sociology of our relationship to the world, Cambridge, Polity Press, 2019, 551 pp.
12. Rosa H.,The uncontrollability of the world, Cambridge, Polity Press, 2020, 140 pp.
13. Urry J.,The complexity turn, Theory, Culture & Society, London, 2005, Vol. 22, No. 5, pp. 1–14.
14. Wendt A.,Quantum mind and social science: Unifying physical and social ontology, Cambridge, Cambridge University Press, 2015, 350 pp.
15. Wendt A., Why IR scholars should care about quantum theory, part I, International Theory, Cambridge, 2022, Vol. 14, No. 1, pp. 119–129.
16. Wendt A., Why IR scholars should care about quantum theory, part II, International Theory, Cambridge, 2022, Vol. 14, No. 1, pp. 193–209.